մանապէս և ազգականներն, երբէք ներկայ չեն լինում թէ եկեղեցում պսակագրութեանը և թէ ընդհանրապէս հարսանիքում, փեսայի տանը, այլ հարսը տանելուց յետոյ միում են իրենց տանը։ Նոյն թշնամական հետքերը աւելի բելիէֆ երևում են Բուլանըխի մի սովորութիւնից։ «Պսակուելուց 4—5 շաբաթ յետոյ սովորութիւն ունեն հարսի հէրանք՝ վերադարձնել աղջիկը իրենց տուն, որ կրկատարուի յատուկ հրաւիրակ կնոջ ձեռամբ։ Մնալով 3—4 շաբաթ հէրանց տանը, վերադարձը նոյնպէս և փեսայի տան կողմից գնացող հրաւիրակ կնոջ ձեռքով կրկատարուի» [1])։ Այդ ժամանակից յետոյ հարսը իրաւունք ունի յաճախել իւր պապոնց տունը։ Այս տեսակ կեղծ խզուած յարաբերութիւնները երկու ընտանիքների մէջ և հարսանիքից յետոյ, ի հարկէ, պէտք է բացատրել այն թշնամական զգացմունքով, որը առաջանում էր հին ժամանակները աղջիկը փախցնելիս վերջինիս ծնողների մէջ։ Անհրաժեշտ էր հաշտութիւն կայացնել, որպէսզի աղջիկը կարողանար իւր ծնողների մօտ յաճախել։

Մի նոյնանման սովորութիւն գոյութիւն ունի նաև Դարալագեազում, ուր մեծ պասի միջինքին (երբ հարսանիքը բարեկենդանին է կատարուած) հարսի հայրը իւր աղջկայ համար բերում է թաքաղ, այսինքն զանազան մրգեղէն և ուտելիք։ Ծաղկազարդին իւր աղջկան հրաւիրում է իւր տուն և այդ հրաւէրը կոչւում է ղարձ. աղջկան ծնողները պահում են իրենց մօտ մինչև Համբարձում [2])։

V.

Վերը բերած բոլոր օրինակները, մեր կարծիքով, միանգամայն բաւական են պարզաբանելու այն հարցը, թէ հա-

[1]) Բենէ՝ Բուլանըխ—Ազգագր. Հանդէս, 1899 թ. գիրք Ե.

[2]) Թաջբերունի՝ Հայկական սովորութիւններ—Ազգագրական Հանդէս. 1901 թ. գիրք. VII և VIII. եր. 201.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան